



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵՑ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ Ս. ԽԱՀ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՄԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻԶԻՆՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ



Չորեքշաբթի, 30  
Մարտին, Միջինքի օրուան  
առիթով, Առաջնորդ  
Սրբազան Հայրը  
հանդիսապետեց  
Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր  
Տաճարի Արեւագալի  
ժամերգութեան եւ  
փոխանցեց իր պատգամը,  
Մեծ Պահոց ու Միջինքի  
օրուան յատուկ իր  
խորհրդածութիւնները  
կատարելով:

Արարողութեան  
ներկայ էին Մոնթեպելլոյի

Մերոպեան Ազգային վարժարանէն խումբ մը աշակերտներ:  
Մանկապարտեզի աշակերտները խմբովին «Իմաստութիւն Հօր Յիսուս»  
աղօթքը արտասանեցին:

Արեւագալի արարողութենէն ետք, Ս. Խաչ եկեղեցւոյ Տիկնանց  
Միութիւնը, տարիներու աւանդութեան համաձայն, սիրոյ ճաշ  
կազմակերպած էր, հիրընկալութեամբ Տիկին Անուշ Մարթայեանի, որ  
տեղի ունեցաւ եկեղեցւոյ կից »Բաղրամեան« սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւն  
ու ներկայութիւնը: Ներկայ էին նաեւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց  
Օժանդակ Մարմնի անդամներ:

Գեղարուեստական յայտագիրին մասնակցութիւն բերին Մերոպեան  
Ազգային վարժարանի աշակերտները:

Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Չորեքշաբթի, 30 Մարտին,  
Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Արեւագալի ժամերգութեան  
նախագացեց եւ քարոզեց Գերպ. Տ. Միւռն Շ. Կրդ. Ազնիկեան:



Արարողութենէն ետք,  
 Փասատիւայի ՅՕՄԻ «Սօւտ»  
 Մասնաճիւղի Միջինքի ճաշը  
 տեղի ունեցաւ  
 Փասատիւայի Յայ  
 Կեդրոնին մէջ:  
 Իրագործուեցաւ կոկիկ  
 յայտագիր մը: Օրուան  
 բանախօսն էր Գերպ. Տ.  
 Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան,  
 որ խօսեցաւ Մեծ Պահոց  
 խորհուրդին եւ Միջինքի  
 օրուան իմաստին մասին:  
 Կլենտէյլի Ս.  
 Աստուածածին եկեղեցոյ

Արեւագալի արարողութեան նախագահեց եւ քարոզեց Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Նոյն օրը, Չորեքշաբթի, 30 Մարտի կեսօրին, Վահան եւ Անուշ Շամլեան Ազգային Վարժարանի Միջինքի ճաշը տեղի ունեցաւ «Անուշ» ճաշարանին մէջ, Կլենտէյլ: Ձեռնարկը կազմակերպուած էր վարժարանին Ծնողա-Օժանդակ Մարմինին կողմէ: Բանախօսն էր Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան: Ան ելոյթ ունեցաւ «Մեծ Պահոց Իմաստը Յայ Կնոջ Կեանքին մէջ» սիրով:

## PRELATE PRESIDES OVER MID-LENT SUNRISE SERVICE AND LUNCHEON AT HOLY CROSS CATHEDRAL



On Wednesday, March 30<sup>th</sup>, on the occasion of the median day of Great Lent, the Prelate presided over Sunrise Service at Holy Cross Cathedral in Montebello and delivered his message and contemplations on Lent and mid-Lent.

Mesrobian School students attended the service and Kindergarten students recited a prayer.

The annual Parish Ladies Auxiliary mid-Lent luncheon followed at the adjacent "Bagramian" Hall, presided over by the Prelate and hosted by Mrs. Anoush Martayan.

The luncheon included a cultural program, in which Mesrobian School students participated.

On the occasion of mid-Lent and by

the ordinance of the Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian conducted Sunrise Service and delivered the sermon at St. Sarkis Church in Pasadena. A luncheon organized by the ARS "Sosse" Chapter followed at the Pasadena Armenian Center, during which Fr. Muron spoke on Great Lent.

Very Rev. Fr. Barthev Gulumian conducted Sunrise Service at St. Mary's Church in Glendale. A luncheon organized by the Chamlian School Parent-Teacher Organization followed at "Anoush" Restaurant, during which Fr. Barthev spoke on the meaning of Great Lent in the lives of Armenian women.